ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

07.08.2023թ. N 06/11.2/10202-2023

ՀՀ Կոտայքի մարզ,
Աբովյան համայնքի ղեկավար
պարոն Էդուարդ ԲԱԲԱՅԱՆԻՆ

Ի լրումն մեր 2023 թվականի մայիսի 12-ի
N 06/11.2/5918-2023 գրության -> Դ-997

Հարգելի պարոն Բաբայան

Ձեզ ենք տրամադրում ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի վարչական տարածքում գտնվող 07-002-0103-0202 կադաստրային ծածկագրով 1.51449 հա մակերեսով հողամասը, փաստացի օգտագործմանը համապատասխանեցնելու նպատակով (կաթի վերամշակման արտադրամաս), հատուկ նպատակային նշանակության հողերից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու ամփոփ տեղեկանքը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

Առդիր՝ 3 ֆայլ:

Հարգանքով՝

Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ստորագրված է էլեկտրոնային ստորագրությամբ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Հովիկ Դավթյան, հեռախոս՝ 011 621 725,
Կատարող՝ Լիլիթ Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտքի թիվ Դ-1172
« 07 » 08 2023 թ.